«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ
____ 2023 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 405-Ն որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «զորակոչերի ենթակա (18-27 (35) տարեկան» բառերը փոխարինել «զորակոչերի ենթակա (18-28 (35) տարեկան» բառերով.

2) 5-րդ կետում՝

ա. առաջին և չորրորդ պարբերություններում «պատճառով» բառից հետո լրացնել «զինվորական ծառայության համար ժամանակավորապես» բառերը,

բ. չորրորդ պարբերությունում «քաղաքացիները» բառից առաջ լրացնել «կամ նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած» բառերը,

գ. հինգերորդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) կնքած քաղաքացիները,» բառերը հանել.

3) 19-րդ, 45-րդ, 76-րդ կետերում և ՁԼ N 13-ում «ատամնաբույժ» բառը փոխարինել «ստոմատոլոգ» բառով.

4) 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. Զինվորական հաշվառման ժամանակ բուժման ենթակա կամ ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացիների առողջական վիճակի նկատմամբ հետագա շարունակական հսկողության և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան անվճար բուժման աշխատանքները կազմակերպվում են ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից՝ զինվորական կոմիսարիատների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, իսկ զորակոչից տարկետում ստացած և բուժման կամ դինամիկ հսկողության կարիք ունեցող քաղաքացիների բուժումը կամ հսկողությունը՝ համապատասխան բժշկական կազմակերպությունների կողմից՝ զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով վավերացված ուղեգրերի հիման վրա։».

5) 38-րդ կետում «Նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիները զինվորական հաշվառման ժամանակ» բառերը փոխարինել «Զինվորական հաշվառման ժամանակ քաղաքացիները» բառերով.

6) 40-րդ կետում «(հանձնաժողովի նախագահի)» բառերը հանել.

7) 47-րդ կետի 1-ին ենթակետում «մարտի 15-ը և սեպտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «մարտի 25-ը և սեպտեմբերի 25-ը» բառերով.

8) 59-րդ կետում «զորակոչային տարիքի անձանց» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հավելվածի 63-րդ կետում նախատեսված անձանց)» բառերը.

9) 69-րդ կետի երկրորդ նախադասությունում «համապատասխան թերթիկ» բառերը փոխարինել «օբյեկտիվ զննության թերթիկ» բառերով.

10) 71-րդ կետի առաջին պարբերությունում՝

ա. առաջին նախադասությունում «պատճառով» բառից հետո լրացնել «զինվորական ծառայության համար ժամանակավորապես» բառերը,

բ. չորրորդ նախադասությունում «ժամկետը» բառից հետո լրացնել «, իսկ պիտանի ճանաչվելու դեպքում կրկին հաշվառվում են պահեստազորում» բառերը.

11) 129-րդ կետի վերջում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետը տարածվում է նաև պահեստազորից պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացիների վրա՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի համաձայնության առկայության դեպքում:».

12) ՁԵՎ N 3-ում՝

ա. «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ» և «(ստորագրությունը) (անունը, ազգանունը)» տողերը հանել,

բ. «ՁԿ կնիք» բառերը փոխարինել «Կ.տ.» հապավումով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ